

ԿԱՐԳ ԱՂՔԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի գործողությունը տարածվում է համայնքի ղեկավարի, ավագանու, աղբահանության կազմակերպման պատասխանատուների, համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական անձանց, համայնքի բնակիչների, ժամանակավոր բնակիչների, աղբահանության ծառայություն մատուցող անձանց վրա:
3. Աղբահանությունը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանք է, օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ: Աղբի հավաքման, հեռացման, փոխադրման, պահման, աղբավայրերի շահագործման հսկողությունը իրականացնում է համայնքի ղեկավարը:
4. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.
 - ա) նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական /վտանգավոր/ ներգործությունը,
 - բ) ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ,
 - գ) աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը:

2. Աղբի հավաքման, պահման, աղբամանների տեղադրման վայրերը

5. Կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում հնարավորինս ապահովելով սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջները:
6. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15 մ և ոչ ավելի, քան 100 մ հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում աղբամանները տեղադրվում են մարդկանց զանգվածային կուտակման վայրերից ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա: Հանգստի գոտիներում աղբամանները տեղադրվում են 3500-4000մ² մակերեսին 1 աղբաման հաշվարկով:
7. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերի բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցի մոտեցման համար հարմար դիրքով, ջրանթափանց, հարթ, բարեկարգ մակերեսով հարթակների վրա: Աղբամանները չեն տեղադրում փողոցների մայթերի և սիզամարգերի վրա:
8. Աղբամանները աղբով լցվում են ծավալի երկու երրորդից ոչ ավելի մակարդակով:

